ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հոկտեմբերի 2025 թվականի N 1420-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 718-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 718-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N 3 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N 3.4 ստուգաթերթի 77-րդ կետը «պայմաններն են.» բառերից հետո լրացնել «Նշում 2*» բառերով.

2) N 3.5 ստուգաթերթի 95-րդ կետը «պայմաններն առկա են.» բառերից հետո լրացնել «Նշում 2*» բառերով.

3) N 3.4 և N 3.5 ստուգաթերթերի «Ծանոթագրություններ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ «Նշում 2*»-ով՝

«Նշում 2*

1. Մարզային հիվանդանոցներում մեծահասակների ընդհանուր պրոֆիլի վիրաբուժական և մանկական ընդհանուր պրոֆիլի վիրաբուժական բաժանմունքները կարող են ծավալվել միևնույն բաժանմունքում, ընդ որում՝ բաժանմունքի սենյակները, կաբինետները, կառուցվածքով նախատեսված միավորները և դրանցում նախատեսված՝ կրկնվող սարքավորումները, բժշկական գործիքները և գույքը (պարագաները) կարող են ներկայացվել մեկ օրինակով, բացառությամբ միջամտությունների կաբինետների, որոնք պետք է լինեն առնվազն երկուսը՝ հստակ տարանջատված որպես մեծահասակների և մանկական: Այս դեպքում հիվանդասենյակները հստակ տարանջատվում են որպես մեծահասակների և մանկական:

2. Մարզային հիվանդանոցներում մեծահասակների ընդհանուր պրոֆիլի թերապևտիկ և մանկաբուժական ընդհանուր պրոֆիլի բաժանմունքները կարող են ծավալվել միևնույն բաժանմունքում, ընդ որում՝ բաժանմունքի սենյակները, կաբինետները, կառուցվածքով նախատեսված միավորները և դրանցում նախատեսված՝ կրկնվող սարքավորումները, բժշկական գործիքները և գույքը (պարագաները) կարող են ներկայացվել մեկ օրինակով, բացառությամբ միջամտությունների կաբինետների, որոնք պետք է լինեն առնվազն երկուսը՝ հստակ տարանջատված որպես մեծահասակների և մանկական: Այս դեպքում հիվանդասենյակները հստակ տարանջատվում են որպես մեծահասակների և մանկական:».

4) N 3.5 ստուգաթերթի հարցաշարի 74-րդ կետի 1-3-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

5) N 3.9 ստուգաթերթի հարցաշարի 84-րդ կետի 3-րդ ենթակետում «Բժշկական կշեռք» բառերը փոխարինել «Կշեռք» բառով.

6) N 3.12 ստուգաթերթի հարցաշարի՝

ա. 6-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. 63-66-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

գ. 81-րդ կետի 20-րդ ենթակետում «Տորսիոն կշեռք» բառերը փոխարինել «Էլեկտրոնային կշեռք» բառերով, իսկ 22-րդ ենթակետում «Լաբորատոր և բժշկական պահարաններ» բառերը՝ «Լաբորատոր պահարաններ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

09.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ